ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2021 թվականի
մայիսի 27-ին

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» 2000 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-133 օրենքի 13.8-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա ռոյալթիի գումարը պակաս նախատեսելու դեպքում վճարողը ռոյալթիի կանխավճարի մեծությունը որոշում է ինքնուրույն՝ ընթացիկ տարվա հունիսի 10-ից ոչ ուշ՝ իրենց հաշվառման հարկային մարմին ներկայացնելով հարկային մարմնի ղեկավարի կողմից սահմանված ձևի հայտարարություն: Կանխավճարի տարեկան հանրագումարը տվյալ տարվա փաստացի ռոյալթիից պակաս լինելու դեպքում վճարողը վճարում է տույժ՝ փաստացի ստացված ռոյալթիի մեկ քառորդի և տվյալ եռամսյակի փաստացի կատարված կանխավճարի տարբերության գումարի նկատմամբ՝ կանխավճարի վճարման համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված օրվանից մինչև իրենց հաշվառման հարկային մարմնին փաստացի ռոյալթիի գումարը հայտնի դառնալու (ռոյալթիի հաշվարկ-հաշվետվությունը ներկայացնելու) օրը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2021 թվականի հաշվետու տարում վճարվելիք ռոյալթիի կանխավճարների վրա:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2021թ. հունիսի 3
Ստեփանակերտ
ՀՕ-72-Ն